

րեւոր Յիշատակարանը, որ պատմական մեծ արժէք մը ունի եւ միանգամայն նորանոր տեղեկութիւններ մեզ կ'ընծայէ, մեր Ամիրտովլաթ նշանաւոր բժշկի մասին:

Չեռագիրս 12 սնդմ. երկայնութեամբ, 11 1/2 սնդմ. լայնութեամբ եւ 7 սնդմ. հաստութեամբ գեղեցիկ հատոր մըն է՝ բաւական լաւ վիճակի մէջ, բոլորագիր եւ մագաղաթեայ, զոր Յովհաննէս Գառնեցիի համբաւաւոր Սաղմոսէն ընդօրինակել տուած է Ամիրտովլաթ, ԺԵ. դարու վերջերը, Քրիստոսի 1480 թուին Յուլիսի 8ին:

Երկու Յիշատակարան ունի Սաղմոսս, մէկն սկիզբը, որ նախատիպ Սաղմոսին՝ այսինքն Յովհաննէս Գառնեցւոյ օրինակին վրայ համառօտ տեղեկութիւն մը կու տայ, եւ միւսը վերջը, որ ձեռագրին գրիչը Մարտիրոս արեղայն շարադրած է եւ կը խօսի Ամիրտովլաթայ մասին:

Վարդանք նախ երկրորդն, որ աւելի կը շահագրգռէ զիս եւ է հետեւեալը.

“Աստանաւր յանկ ելեալ կատարեցաւ երգս աստուածային, եւ տառս հոգեւորական քնարս աստուածահասին դաւթեան, որ կոչի սաղմոսարան եւ է հոգեւոր բուրաստան:”

“Գրեալ ձեռամբ յոգնամեղ եւ անարժան ծառայի մարտիրոս արեղայի: Ի ինչորոյ հեղաճօգի եւ պատուական քաջ իմաստասիրի, ճարտարհմուտ հին եւ նոր կտակարանի, եւ աստեղաբաշխութեան արհեստի, Ամիրտովլաթ մեծ գիտնականի եւ արդք բժշկի որ աժմն գործով անունն երեւի, զի զտիւ եւ զգիշեր ոչ դագարի, միշտ ի գիտութիւնս պարապի եւ անհաս բանի հասու լինի, քանզի անչափ է սէր սորա առ աստուած եւ առ գիրքս աստուածային, կամի որ զամենայն ընդիր եւ գեղեցիկ գրեանս առ ինքն ժողովէ: Յորոց մինն այս հոգէնուագ սաղմոսս դաւթայ՝ յարդարեալ եւ սրբագրեալ մեծ վարդապետին հայոց յովհաննիսի մականունն գառնեցի կոչեցեալ՝ յորոյ աղաւթքն օրհնութիւն միշտ եղիցի ի վերայ հաւատացելոց՝ մանաւանդ ի վերայ հայկազան տոհմիս Արամեան:”

“Յորժամ գնաց մեծ խօնդքար (= խունքեար) Սուլտան մուհամմատն ի վերայ ուզուն հասանայ եւ կոտորեաց զնա արար փախստական, բուն զերծեալ գնաց ի թաւրէժ, եւ սա դարձաւ եմուտ ի խախթեան գաւառ ի քաղաքն Բաբերթ կոչեցեալ՝ այրեաց եւ աւերեաց եւ գերի երբեր ըստըմպօլ սաղմոսարան մի լաւ եւ ընդիր աւրինակ, հանդիպեցաւ ամիրտովլաթ

բժիշքս եւ ազատեաց զսուրբ Գիրքն զայն ի գերութենէ, այս եղև ի թվ. ԶԽբ. ամին: Գարձեալ, ի թուականիս հայոց ԶԽբ սուրհուն արար խօնդքարն զղարամանին աշխարհին զհայազգս, եւ զիս զանպիտան հոյս զմարտիրոս, հետ բերին ի Արստանգնուպօլիս, առ ոտս սուրբ վարդապետին մերոյ տէր մաթէոսի սերաստացոյ, եւ արբահամ վարդապետի տրապիզոնեցոյ, որ եւ զսոքայ ալ խօնդքարն բերել էր վասն պատրիարքութեան համար եւ սոքա ոչ առին յանձն լաւ համարելով զմիայնակեցութիւն, քան թէ փառք առնուլ ի մարդկանէ:”

“Գարձեալ յիշեցուցանեմ զվերոյասացեալն զամիր տովլաթ բժիշկն որ միշտ ցանկացող է եւ սիրող պատուական գրոց վասն որոյ հարկ եդիր ինձ փանաքի եւ անվարժ գրչի մարտիրոս արեղայիս եւ ես ոչ եթէ իրր զքաջարուեստաւոր կամ հմուտ գրչութեան արհեստի յօժարեցայ զսա գրել, այլ կարի վտանգէի ի հարկէ եւ ի սիրոյ զոր պատահեցոյց մեզ՝ պարոն ամիր տովլաթ բժիշկն. յանձն առի գրել մեծաւ աշխատութեամբ ի դառն եւ դժար ժամանակիս եւ հասոյց աստուած յաւարտ բանիս:”

“Աղաչեմ չի ընել մեղադիր սղալանաց եւ խաւշորութեան սորա զի կար մեր այս էր եւ այլ ոչ էի գրեալ զի առաջինն այս էր, վասն ի հարկէ սիրողաց արկի ի սա ձեռն: Բայց ի ծաղկելն առաւել նեղացայ որ չէի տեսեալ ի վարպետէ այլ աւրինակ զնելով եւ զնիւթին գոյնն ոչ գիտելով բազում աշխատութեամբ կատարեցի զսայ:”

“Արդ գրեցաւ սա ի թվ. ԶԽԹ, ի յամսեան Յուլիս ր. մեծահամբաւ Այսեբրանիստ քաղաքս ըստամպաւ, ի դուռն չարախաբան սուրբ աստուածածնիս: Ով սուրբ ընթերձողք յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զամիր տովլաթ բժիշկս որ ստացաւ զսա յարդար յընչից իւրոց ի վայելումն բարի զաւակաց իւրոց, զոր տէր աստուածն ամենայնի վայելեալ տացէ եւ յետ աստեացս ելանելոյն ընդ սուրբ իմաստասիրացն դասակից եւ պսակակից արասցէ Ամէն: Այլ եւ յիշեցէք զմեր պարոն երեսփոխան աստուածատուրն եւ զկենակիցն իւր զթաւուս խաթունն որ շատ ծնօղութիւն կառնեն եւ յամեն աւր Բ. անգամ Ե. հոգւոյս կերակուր կու պատրաստեն, լսել տա աստուած զերանաւէտ ձայնն թէ եկայք աւրհնեալք հօր իմոյ ժառանգ: Գարձեալ յիշեց” յաղօթս ձեր զսահակ սարկաւազն որ բազում անկամ աշխատել է ի